նում պահվեն կայուն և երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման, ներդրումների խրախուսման, նորարարության և տեխնոլոգիական զարգացման խթանման, հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման նպատակադրումները:

СИЛЬВА ГЕВОРГЯН

НАЛОГИ КАК ОСНОВНОЙ ИСТОЧНИК ДОХОДОВ ГОСУДАРСТВЕННОГО БЮДЖЕТА РА

Ключевые слова: *налог, налоговая система, налоговые поступления, налоговая политика, налоговый кодекс.*

В статье представлен путь формирования и дальнейшего развития налоговой системы РА, реформы, проведенные в налоговом законодательстве с точки зрения основных видов налогов и ими обусловленные результаты. Структурный анализ доходов государственного бюджета за каждый год указывает на важность средств полученных из налогов в стране. Это обстоятельство также требует постоянного совершенствования налоговой политики с целью увеличения бюджетных поступлений за счет обеспечения благоприятной деловой среды и экономического роста.

SILVA GEVORGYAN

TAXES AS THE MAIN SOURCE OF REVENUE OF THE RA STATE BUDGET

Key words: *tax, tax system, tax revenues, tax policy, tax code.*

The article presents the process of formation and further development of the tax system of the Republic of Armenia, the reforms carried out in the tax legislation from the point of view of the main types of taxes and its results. The structural analysis of revenues received from the state budget for each year indicates the importance of the funds obtained from taxes in the country. This factor also requires the continuous improvement of tax policy, with the aim of increasing budget revenues through the provision of favorable business environment and economic growth.

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ապահովագրական գործ,
բակալավրիատ, 3-րդ կուրս

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՌԱՎԵԼ ԽՈՇՈՐ 2 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

Հիմնաբառեր. *գույքային ապահովագրություն, «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ, ապահովագրական վճարներ, ապահովագրական հատուցումներ, սակագներ*

Հոդվածում ներկայացված և վերլուծված են ՀՀ ապահովագրական շուկայի առավել խոշոր 2 ընկերությունների՝ «Ռոսգոսստրախ Արմենիայի» և «Ինգո Արմենիայի»՝ վերջին 3 տարում հավաքագրած ապահովագրավճարների, տրված հատուցումների և կիրառվող սակագների տվյալները: Ընկերություններն իրականացնում են «Ոչ կյանքի ապահովագրության» գծով գործունեություն:

«**Ռոսգոսստրախ Արմենիան**» հիմնադրվել է 2008 թ. և փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 20.05.2008 թ., ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված N0009 արտոնագրային համարով[1]:

Ընկերությունը 11.06.2013 թ. ստացել է նաև ոչ կյանքի վերաապահովագրության արտոնագիր (N0004) և 2014 թ. կնքել է վերաապահովագրության պայմանագրեր:

Ընկերությունը ընդհանուր ապահովագրական գործունեությամբ է զբաղվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ավտոտրանսպորտային միջոցների, փոխադրվող բեռների, հրդեհների և բնական աղետների, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ընդհանուր պատասխանատվության, ֆինանսական վնասների և արտասահման մեկնողների ապահովագրություն: 2010 թվականից ընկերությունն անդամակցում է Ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության բյուրոյին և կնքում է նշված բնույթի ապահովագրական պայմանագրեր:

Ընկերությունը գրասենյակներ ունի ՀՀ մարզերում և ք. Երևանում, ընդհանուր՝ 46, որից 31-ը՝ մարզերում, 15-ը՝ մայրաքաղաքում, այդ թվում՝ գլխավոր գրասենյակը:

«**Ինգո Արմենիան**» հիմնադրվել է 1997 թ. սեպտեմբերի 2-ին «Էֆես» ԱՓԲԸ անվամբ և փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 02.09.1997 թ., ՀՀ կենտրոնական բանկի կողմից N0014 արտոնագրային համարով: 2003 թ. դեկտեմբերին այն վերանվանվել է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ: 28.03.2008 թ. ընկերությունը վերաարտոնագրվել է N0005 արտոնագրային համարով[(2)]:

Ընկերությունը ընդհանուր ապահովագրական գործունեությամբ է զբաղվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ցամաքային տրանսպորտի, փոխադրվող գույքի, հրդեհից և բնական աղետներից, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ֆինանսական վնասների, ընդհանուր պատասխանատվության, արտասահման մեկնողներին աջակցության ապահովագրությունը: Բացի դրանից, ընկերությունը կատարում է օդանավերի և ջրային փոխադրամիջոցների, ինչպես նաև դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն: 2010 թվականից Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող բյուրոյի անդամ է և 2010 թ. հոկտեմբերից կնքում է ԱՊՊԱ պայմանագրեր: Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, 6 մասնաճյուղերը և 19 ներկա-

[1] http://www.rgs.am/arm/4/page.html

[2] http://www.ingoarmenia.am/index/view/id/140/lang/am

յացուցչությունները՝ Երևանում և ՀՀ մարզերում:

Գույքային ապահովագրությունը ապահովագրական պատահարի հետևանքով ապահովադրի կամ ապահովագրված անձանց կյանքին, առողջությանը կամ աշխատունակությանը վնաս պատճառելու, ինչպես նաև նրանց կյանքում որոշակի իրադարձության երևան գալու (կենսաթոշակային տարիքին հասնելը, ամուսնությունը, մահը և այլն) դեպքերում ապահովագրական գումարի վճարման հետ (անձնական ապահովագրության տեսակներ) կապված ապահովագրություն է:

Գույքային ապահովագրությունը կարող է ներառել հետևյալ ռիսկերից ապահովագրություն՝ ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, օդանավերի ապահովագրություն, փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն, ֆինանսական վնասներից ապահովագրություն:

2015 թ. երկու ընկերությունները նշված դասերով հավաքագրել են 4526548 հազ. դրամ ապահովագրավճար, մասնավորապես՝ «Ռոսգոսստրախ Արմենիան»՝ 2262756[1] հազ. դրամ, «Ինգո Արմենիան»՝ 2263792[2] հազ. դրամ: Ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հավաքագրած ապահովագրավճարները կազմել են ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 24.16%-ը: Նույն դասով «Ինգո Արմենիայի» ապահովագրավճարները ընդհանուր ապահովագրավճարների մեջ կազմել են 24.47%: Օդանավերի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» ապահովագրավճարները կազմել են ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 2.24%-ը, «Ինգո Արմենիայինը»՝ շուրջ 1.76%-ը: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հավաքագրած ապահովագրավճարները կազմել են ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 14.46%-ը, «Ինգո Արմենիայինը»՝ շուրջ 3.97%-ը: Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով առաջինի դեպքում ապահովագրավճարները կազմել են ընդհանուր ապահովագրավճարների 48.65%-ը, երկրորդի՝ 68.739%-ը: Ֆինանսական վնասների ապահովագրության դասով համապատասխանաբար 10.47%-ը և 1.04%-ը: 2015 թ. երկու ընկերությունների ապահովագրավճարների գերակշիռ մասը կազմել են հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով հավաքագրած վճարները:

Սակայն միայն ապահովագրավճարների հավաքագրման ծավալներով չենք կարող հստակ որոշել ապահովագրական ընկերության ֆինանսական և առևտրային դրությունը, քանի որ ապահովագրական պատահար տեղի ունենալիս ընկերությունը պարտավոր է հատուցել ստանձնած ռիսկերի չափով:

2015 թ. երկու ընկերությունները նշված դասերով ապահովագրական հատուցում են տրամադրել ընդհանուր 886348 հազ. դրամ, որից՝ 59.44% «Ռոսգոսստրախ Արմենիան», 40.55%՝ «Ինգո Արմենիան»: Ընկերությունները օդանավերի ապահովագրության դասով հատուցումներ չեն իրականացրել, քանի որ ապահովագրական պատահարներ տեղի չեն ունեցել: Ցամաքային ապահովագրության դասով երկու ընկերությունները հատուցումներ են

[1] http://www.rgs.am/arm/323/faq.html

[2] http://www.ingoarmenia.am/index/view/id/153/lang/am

տրամադրել իրենց ընդհանուր ապահովագրավճարների 56.7%-ի և 78.07%-ի չափով: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով տրամադրված հատուցումները կազմել են համապատասխանաբար 3.28% և 1.88%, Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով՝ 5.9% և 6.76%, իսկ Ֆինանսական վնասների ապահովագրության դասով՝ 34.08% և 13.2%: 2015 թ. հատուցումներ առավելապես տրամադրվել են ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով. «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները կազմել են ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 23.28%-ը, իսկ «Ինգո Արմենիայինը»՝ 15.87%-ը:

2016 թ. երկուսն ընդհանուր առմամբ հավաքագրել են 4792525 հազ. դրամ ապահովագրավճար՝ 48% և 52% համամասնությամբ: Ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է իր ընդհանուր ապահովագրավճարների 18.33%-ը, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 22.8%-ով: Այս դասով «Ինգո Արմենիան» հավաքագրել է իր ապահովագրավճարների 17%, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 21.46%-ով: Օդանավերի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է ընդհանուր ապահովագրավճարների 7.26%-ը, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 3.2 անգամ: Նույն դասով «Ինգո Արմենիան» հավաքագրել է իր ընդհանուր ապահովագրավճարների 3.485%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.1 անգամ: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է ընդհանուր ապահովագրավճարների 15.77%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.9%-ով, իսկ «Ինգո Արմենիան»՝ 3.265%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.69%-ով: Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է իր ընդհանուր ապահովագրավճարների 47.3%-ը, ինչը նախորդ տարվա համեմատ ունի բացասական միտում՝ 1.1%-ով, իսկ «Ինգո Արմենիան»՝ 73.53%-ը, ինչը նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել է 17.7%-ով: Ֆինանսական վնասների ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 11.31%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.8%-ով, իսկ «Ինգո Արմենիան»՝ 2.24%-ը՝ նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճելով 2.36 անգամ:

2016 թ. ապահովագրության նշված դասերով երկու ընկերություններն իրականացրել են ընդհանուր առմամբ 1 205 721 հազ. դրամի հատուցում: «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 71.5%-ով, իսկ «Ինգո Արմենիայինը» նվազել են 16.09%-ով: Ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 35.99%-ով, իսկ «Ինգո Արմենիայինը» նվազել են 28.6%-ով: Այս դասով յուրաքանչյուր ընկերության հատուցումները ընդհանուր հատուցումների մեջ կազմել են համապատասխանաբար 44.9% և 66.4%: Օդանավերի ապահովագրության դասով դիտարկվող ժամանակաշրջանում հատուցումներ իրականացրել է միայն «Ինգո Արմենիան»՝ ընդհանուր հատուցումների 1.8%-ի չափով: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները, նախորդ տարվա համեմատ, ավելացել են շուրջ 2.5 անգամ, ինչը ընդհանուր ապահովագրական հատուցումների մեջ

կազմել է 4.8%, նույն դասով «Ինգո Արմենիայինը» աճել են շուրջ 3.6 անգամ՝ կազմելով ընդհանուր հատուցումների 8.26%-ը: Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները աճել են 72.88%-ով, ինչը ընդհանուր հատուցումների մեջ կազմել է 5.9%, իսկ «Ինգո Արմենիայինը» աճել են 2.12 անգամ և ընդհանուր հատուցումների մեջ կազմել 17.1%: Ֆինանսական վնասների ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան», ի տարբերություն նախորդ տարվա, դիտարկվող ժամանակահատվածում տրամադրել է շուրջ 2.2 անգամ ավելի ապահովագրական հատուցում, ինչը կազմել է տվյալ տարվա ընդհանուր հատուցումների 44.25%-ը: Մինչդեռ նույն ժամանակաշրջանում «Ինգո Արմենիան» տրամադրել է 2.4 անգամ ավելի քիչ հատուցում, քան նախորդ տարում, ինչը կազմում է ընդհանուր հատուցումների 6.3%-ը: Կարող ենք նկատել, որ «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումներում առավել մեծ տոկոս են կազմել ցամաքային տրանսպորտի և ֆինանսական վնասների ապահովագրության դասերով տրված հատուցումները, իսկ «Ինգո Արմենիա»-ի հատուցումներում՝ միայն ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասի: Դիտարկվող ժամանակաշրջանում ընկերությունները ապահովագրական հատուցումներ են տրամադրել ապահովագրավճարների համապատասխանաբար 39.2%-ի և 12.1%-ի չափով:

2017 թ. ընկերությունները, ի տարբերություն նախորդ տարիների, իրենց գործունեությունն ընդլայնել են գրեթե 2 անգամ: «Ռոսգոսստրախ Արմենիան» ընդհանուր առմամբ հավաքագրել է 5237640 հազ. դրամ ապահովագրավճար, իսկ «Ինգո Արմենիան»՝ 4999150 հազ. դրամ: Առաջինի դեպքում ապահովագրավճարների մեջ ամենաշատ ապահովագրավճարներ հավաքագրվել են հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով, այնուհետև ցամաքային տրանսպորտի, ֆինանսական վնասների, Փոխադրվող գույքի(բեռների), օդանավերի ապահովագրության դասերով՝ համապատասխանաբար 47.83%, 17.77%, 15.77%, 12.28% և 6.33%, իսկ երկրորդի դեպքում ամենաշատ ապահովագրավճարներ հավաքագրվել է նույնպես հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով, այնուհետև՝ ցամաքային տրանսպորտի, Փոխադրվող գույքի(բեռների), ֆինանսական վնասների և օդանավերի ապահովագրության դասերով՝ համապատասխանաբար 54.76%, 25.5%, 12.11%, 6.11% և 1.42%:

2017 թ. ապահովագրավճարների ծավալը, ի տարբերություն նախորդ տարիների, կտրուկ աճ է գրանցել: 2016 թ. համեմատությամբ երկու ընկերությունների հավաքագրած վճարները ավելացել են համապատասխանաբար գրեթե 2.3 և 2 անգամ: Միևնույն ժամանակ տրված հատուցումներն ավելացել են 1.9 և 3.4 անգամ: Դիտարկվող ժամանակահատվածում «Ռոսգոսստրախ Արմենիայի» Ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով ապահովագրավճարները նախորդ տարվա համեմատ ավելացել են 2.2 անգամ՝ կազմելով ընդհանուր վճարների 17.7%-ը, նույն ժամանակահատվածում «Ինգո Արմենիայի» ապահովագրավճարները ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով ավելացել են շուրջ 3 անգամ՝ կազմելով ընդհանուր ապահովագրավճարների 25.5%-ը: Օդանավերի ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան» հավաքագրել է 1.9 անգամ ավելի, քան նախորդ տարում: Հավաքագրած ապահովագրավճարները կազմել են ընդ-

հանուր ապահովագրավճարների 6.3%-ը: Նույն ժամանակահատվածում «Ինգո Արմենիան» հավաքագրել է 17.7%-ով պակաս նախորդ տարվանից, ինչը կազմել է ընդհանուր ապահովագրավճարների 1.4%-ը: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» ապահովագրավճարները, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 77.2%-ով՝ կազմելով ընդհանուր ապահովագրավճարների 12.28%-ը, իսկ «Ինգո Արմենիայինը» աճել են շուրջ 7.5 անգամ՝ կազմելով ընդհանուր ապահովագրավճարների շուրջ 12.11%-ը:

Երկու ընկերությունները ամենաշատ ապահովագրավճարներ դիտարկվող ժամանակաշրջանում հավաքագրել են հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով. «Ռոսգոսստրախ Արմենիան», նախորդ տարվա համեմատ, հավաքագրել է 2.3 անգամ ավելի ապահովագրավճար՝ ընդհանուր ապահովագրավճարների մեջ կազմելով 47.8%, իսկ «Ինգո Արմենիան»՝ 1.5 անգամ ավելի՝ ընդհանուր ապահովագրավճարների մեջ կազմելով 54.7%: Փոքր տոկոս չեն կազմել նաև ֆինանսական վնասների ապահովագրության դասի ապահովագրավճարները. մասնավորապես՝ «Ռոսգոսստրախ Արմենիան», նախորդ տարվա համեմատ, հավաքագրել է շուրջ 3 անգամ ավելի ապահովագրավճար՝ կազմելով ընդհանուր ապահովագրավճարների 15.7%-ը, իսկ «Ինգո Արմենիան»՝ 5.5 անգամ ավելի՝ ընդհանուրի շուրջ 6.1%-ը:

2017 թ. «Ռոսգոսստրախ-Արմենիայի» հատուցումները ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով ավելացել են գրեթե 45.8%-ով, իսկ «Ինգո Արմենիայինը»՝ 2.7 անգամ՝ կազմելով 52.3%: Օդանավերի ապահովագրության դասով ընկերությունները հատուցումներ չեն տրամադրել՝ ապահովագրական դեպքեր տեղի չունենալու պատճառով: Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» հատուցումները ավելացել են 6.5 անգամ, իսկ ընդհանուր հատուցումների մեջ կազմել են 16.3%: Նույն դասով «Ինգո Արմենիայի» հատուցումները գրեթե չեն փոխվել՝ մնալով ընդհանուր հատուցումներում 2.4%: Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության դասով «Ռոսգոսստրախ Արմենիան», նախորդ տարվա համեմատ, տրամադրել է 3.4 անգամ ավելի հատուցում՝ ընդհանուր հատուցումներում կազմելով 10.7%, իսկ «Ինգո-Արմենիայի» հատուցումներն ավելացել են շուրջ 2.5 անգամ՝ կազմելով 12.6%: Ֆինանսական վնասների ապահովագրության դասով առաջինի հատուցումները աճել են 15.7%-ով՝ կազմելով ընդհանուր հատուցումների 26.8%-ը, իսկ երկրորդինը՝ 17 անգամ՝ կազմելով դիտարկվող ժամանակաշրջանի հատուցումների 32.5%-ը: Փաստորեն, 2015 և 2017 թթ. ընթացքում ընկերությունների ապահովագրավճարներն ավելացել են համապատասխանաբար 2.3 և 2.2 անգամ, իսկ հատուցումները՝ 3.27 և 2.87 անգամ:

Ապահովագրավճարները ընկերության շարունակական գործունեության համար գլխավոր դեր են կատարում, և ընկերությունները, գիտակցելով դրա կարևորությունը, պետք է կարողանան իրականացնել արդյունավետ քաղաքականություն, որպեսզի ներգրավեն ավելի շատ վճարներ և միևնույն ժամանակ կարողանան ստանձնած ռիսկերը փոխհատուցել: Հետևաբար յուրաքանչյուր ապահովագրական ռիսկը գնահատելիս պետք է սահմանվեն համապատասխան սակագներ: Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն

է, որը կամավոր ապահովագրության տեսակների համար որոշվում է ապահովագրողի կողմից, իսկ պարտադիր ապահովագրության տեսակների համար սահմանվում է օրենքով: Նշված յուրաքանչյուր ապահովագրության դասի համար ներկայացված են ցուցանիշներ,[1] նշված դասով «Ռոսգոսստրախ Արմենիայի» յուրաքանչյուր սակագինն[2] ունի հետևյալ տեսքը՝ *ցամաքային տրանսպորտի ապահովագրություն* – նվազագույն բրուտտո սակագին՝ 0.4485%, առավելագույն բրուտտո սակագին՝ 16.5304%, իսկ նույն դասով «Ինգո Արմենիայի» սահմանած սակագներն[(3)] են՝ նվազագույն բրուտտո սակագին՝ 0.098%, առավելագույն բրուտտո սակագին՝ 69.046%: *Օդանավերի ապահովագրություն՝* «Ռոսգոսստրախ Արմենիա»՝ նվազագույն բրուտտո սակագին - 0.5581%, առավելագույն բրուտտո սակագին - 7.1195%, նույն դասով «Ինգո Արմենիա»՝ նվազագույն բրուտտո սակագին - 0.083%, առավելագույն բրուտտո սակագին - 23.076%: *Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն՝* «Ռոսգոսստրախ-Արմենիա»՝ նվազագույն բրուտտո սակագին - 0.0241%, առավելագույն բրուտտո սակագին - 5.7051%, նույն դասով «Ինգո Արմենիա»՝ համապատասխանաբար 0.036% և 8.453%: *Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն՝* «Ռոսգոսստրախ-Արմենիա»՝ նվազագույն բրուտտո սակագին - 0.0027%, առավելագույն բրուտտո սակագին - 8.0645%, նույն դասով «Ինգո Արմենիա»՝ համապատասխանաբար 0.017% և 5.382%: *Ֆինանսական վնասների ապահովագրություն՝* «Ռոսգոսստրախ-Արմենիա»՝ նվազագույն բրուտտո սակագին - 0.0085%, առավելագույն բրուտտո սակագին - 11.5244%, նույն դասով «Ինգո Արմենիա»՝ 0.371% և 8.206%:

Տվյալներից ակնհայտ է, որ նվազագույն բրուտտո սակագինը «Ռոսգոսստրախ-Արմենիայում» առավել նվազ է հետևյալ դասերով՝ օդանավերի ապահովագրություն, փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն և ֆինանսական վնասների աահովագրություն, իսկ «Ինգո Արմենիայում»՝ միայն ցամաքային տրանսպորտի ապահովագրության դասով: Առավելագույն բրուտտո սակագինը «Ռոսգոսստրախ-Արմենիայում» առավել նվազ է հետևյալ դասերով՝ ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, օդանավերի ապահովագրություն, փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, իսկ «Ինգո Արմենիայում»՝ հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն և ֆինանսական վնասների ապահովագրության դասերով:

Գույքային ապահովագրության գծով ՀՀ ապահովագրական շուկայի այս խոշոր ընկերությունները ապահովագրական ծածկույթ են տրամադրում՝ կապված ցամաքային տրանսպորտային միջոցների (բացառությամբ երկաթուղային տրանսպորտի), օդանավերի, փոխադրվող գույքի, գույքին պատճառված հրդեհներից և բնական աղետներից վնասների, ֆինանսական վնասների ռիսկերից ապահովագրության նպատակով: Ցածր մրցակցության պատճառով ընկերությունները հավաքագրած ապահովագրավճարների ծավալներով գրեթե հավասար են և շուկայում ունեն գերիշխող դիրք: «Ռոսգոսստրախ Արմենիան» դիտարկվող ժամանակաշրջանում հավաքագրած ապահովագրավճարների ծավալով գերազանցում է «Ինգո Արմենիային», սակայն

[1] Տե՛ս հավելվածներ 3, 4:
[2] http://www.rgs.am/up/files/Rates-2016.pdf
[3] http://www.ingoarmenia.am/

առանձին ռիսկերի գծով ապահովագրական ծածկույթներ տրամադրելու մասով (ցամաքային տրանսպորտային միջոցներ, հրդեհներ և բնական աղետներ) զիջում է: Ընկերությունները մատուցում են միանման ապահովագրական ծառայություններ՝ կիրառելով տարբեր սակագնային քաղաքականություն, որը հնարավոր է լինի նաև չարդարացված և չհիմնավորված, սակայն ՀՀ-ում սակագների հիմնավորվածությունը պարտադիր պայման չէ: Հավաքագրված ապահովագրավճարների ծավալը ընթացիկ ժամանակաշրջանում ամբողջությամբ բավարար է ապահովագրական հատուցումներ կատարելու համար, և ընկերությունները իրացվելիության և վճարունակության հետ խնդիրներ չեն ունեցել:

Հաշվի առնելով ՀՀ ներքին իրադրությունը, շուկայական տնտեսության նախադրյալների ստեղծումը՝ կարևոր է, որ ապահովագրական ընկերությունները ամբողջովին դրա մի մասը կազմեն: Վերլուծելով ՀՀ առավել խոշոր 2 ընկերությունների գործունեությունը՝ պետք է նկատենք, որ դրանք ավելի մեծաթիվ ապահովագրական պոլիսներ են կնքում, քան ապահովագրական շուկայի մյուս ընկերությունները, ինչը, նախևառաջ, շուկայի համար ոչ այնքան բարենպաստ մրցակցային միջավայր է ստեղծում: Քանի որ յուրաքանչյուր ապահովագրական ընկերություն ինքն է որոշում իր ապահովագրական սակագները, ապա շուկայի մյուս մասնակիցների համար կարող են առաջանալ ոչ այնքան հարմար պայմաններ: Ընկերությունները որևէ կերպ չեն հիմնավորում սակագների հաշվարկը: Այդ իսկ պատճառով, որպեսզի ազատ մրցակցային պայմաններ ստեղծվեն, պետությունը պետք է հետևողականություն ցուցաբերի: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ապահովագրական ընկերությունների վճարունակության հնարավոր խնդիրներից խուսափելու համար պահանջել և ստուգել ապահովագրական սակագների հիմնավորվածությունը, որն այժմ թողնված է ընկերությունների հայեցողությանը:

Հավելված 1

«Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ. հավաքագրած ապահովագրավճարները վերջին 3 տարում

Հազար ՀՀ դրամ

Ապահովագրության դաս / *Տարեթիվ*	*Ապահովագրական ընկերություն*	*Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն*	*Օտանավերի ապահովագրություն*	*Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն*	*Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն*	*Ֆինանսական վնասների ապահովագրություն*	*Ընդամենը*
2017 թ.	Ռոսգոսստրախ-Արմենիա	930 824	331 741	643 337	2 505 651	826 087	5 237 640
	Ինգո Արմենիա	1 278 729	71 474	605 724	737 728	305 495	4 999 150
2016 **թ**.	Ռոսգոսստրախ-Արմենիա	421 945	167 266	362 933	1 088 668	260 348	2 301 160
	Ինգո Արմենիա	435 078	86 847	81 363	1 832 148	55 929	2 491 365
2015 թ.	Ռոսգոսստրախ-Արմենիա	546 757	50 757	327 247	1 100 905	237 090	2 262 756
	Ինգո Արմենիա	553 964	39 971	90 095	1 556 109	23 653	2 263 792

Հավելված 2

«Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ. տրված հատուցումները նշված ժամանակաշրջանում

Հազար ՀՀ դրամ

Ապահովագրության դաս / *Տարեթիվ*	*Ապահովագրական ընկերություն*	*Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն*	*Օդանավերի ապահովագրություն*	*Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն*	*Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն*	*Ֆինանսական վնասների ապահովագրություն*	*Ընդամենը*
2017 **թ.**	Ռոսգոսստրախ Արմենիա	791 223	-	285 311	185 774	463 250	1 725 558
	Ինգո Արմենիա	540 326	-	25 741	130 117	335 618	1 031 802
2016 **թ.**	Ռոսգոսստրախ-Արմենիա	406 368	-	43 790	53 880	400 076	904 114
	Ինգո Արմենիա	200 310	5 468	24 928	51 697	19 204	301 607
2015 **թ.**	Ռոսգոսստրախ-Արմենիա	298 819	-	17 295	31 166	179 599	526 879
	Ինգո Արմենիա	280 668	-	6 782	24 306	47 713	359 469

Հավելված 3

«Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ. գույքային ապահովագրության նշված դասերի սակագները

Ապահովագրության դաս	*Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն*	*Օդանավերի ապահովագրություն*	*Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն*	*Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն*	*Ֆինանսական վնասների ապահովագրություն*
Նվազագույն բրուտտո սակագին Տարեկան	0.4485%	0.0581%	0.0241%%	0.0027%	0.0085%
Առավելագույն բրուտտո սակագին Տարեկան	16.5304%	7.1195%	5.7051%	8.0645%	11.5244%

Հավելված 4

«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ. գույքային ապահովագրության նշված դասերի սակագները

Ապահովագրության դաս	*Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն*	*Օդանավերի պահովագրություն*	*Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն*	*Հրդեհից և բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն*	*Ֆինանսական վնասների ապահովագրություն*
Նվազագույն բրուտտո սակագին Տարեկան	0.098%	0.083%	0.036%	0.017%	0.371%
Առավելագույն բրուտտո սակագին Տարեկան	69.046%	23.076%	8.453%	5.382%	8.206%

ГРИГОР ГРИГОРЯН

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СТРАХОВАНИЯ ИМУЩЕСТВА ПО ДАННЫМ 2 КРУПНЕЙШИХ СТРАХОВЫХ КОМПАНИЙ АРМЕНИИ

Ключевые слова: *страхование имущества, ОАО «Росгосстрах-Армения», ЗАО «Инго Армения», страховые выплаты, страховые возмещения, тарифы.*

В ниже приведенном материале будут подробно рассмотрено информация о собраных страховых выплат за последние три года, выданих возмещении и примененных тарифов двух наиболее крупных компании страхового рынка РА: Росгосстрах-Армения и Инго Армения. Компании осуществляют деятелность «Страхование не жизни».

GRIGOR GRIGORYAN

COMPARATIVE ANALYSIS OF PROPERTY INSURANCE ACCORDING TO THE DATA OF THE LARGEST 2 INSURANCE COMPANIES IN ARMENIA

Key words: *property insurance, Rosgosstrakh-Armenia ICJSC, Ingo Armenia ICJSC, insurance payments, insurance compensations, tariffs.*

In below stated article detailed information will be provided about two biggest insurance companies in Republic of Armenia over the past three years - Rosgosstrakh-Armenia and Ingo Armenia, specifically about their insurance premiums, compensations and existing tariffs. These companies implement non-life insurance activities.

ՆԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *մրցունակության ցուցանիշ, տնտեսական աճ, առաջընթաց, ՀՀ մրցունակության դիրք*

Հոդվածում նկարագրված է Հայաստանի Հանրապետության դիրքը Համաշխարհային մրցունակության զեկույցում: Անդրադարձ է կատարվել 12 հենասյուների ցուցանիշներին, և ներկայացվել են 10 տարվա ընթացքում դիրքի փոփոխության պատճառները: Եզրակացությունները և առաջարկությունները տնտեսության հիմնական մարտահրավերները հաղթահարելու և մրցունակության ցուցանիշը բարձրացնելու նպատակ են հետապնդում:

Համաշխարհային մրցունակության զեկույցում երկրների մրցունակությունը գնահատվում է Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ) միջոցով: Այն մշակվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից և հաշվարկվում է մրցունակության 12 հենասյուների հիման վրա: Ցուցչի հաշվարկման հիմքում վիճակագրական տվյալներ են և ընկե-